Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ
Armenian Territorial Development Fund

N

_____ «_____» _____2020թ.

ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ
պարոն Ա. Հայրապետյանին

Ի կատարումն ՀՀ վարչապետի N 02/06.5/34181-2020 և
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 22.07.2020թ-ի
N ՍՊ/15.3/20585-2020 հանձնարարականների

Հարգելիպարոն Հայրապետյան

Կից Ձեզ ենք ներկայացնում ՀՀ և Եվրասիական զարգացման բանկի միջև «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման համաձայնագրի №1 փոփոխության նախագծի ստորագրման նպատակահարմարության մասին համապատասխան տեղեկանք-հիմնավորման լրամշակված տարբերակը, որի մեջ արտացոլված են համաձայնագրում նախատեսվող բոլոր փոփոխությունների, այդ թվում՝ համաձայնագրի 5-րդ հավելվածում, ծրագրի մասով, կատարվող փոփոխությունների հիմնավորումները:

Առդիր՝ 1 ֆայլ և 1 արխիվացված փաթեթ:

Հարգանքով՝

7/22/2020

Գործադիր տնօրեն X

ԱՐԹՈՒՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ
Director
Signed by: SOGHOMONYAN ARTUR 1205720065

Ա. Սողոմոնյան

Կատարողներ՝
Մ. Գասպարյան հեռ. 010 52-25-50
Ս. Մանուկյան հեռ.055 55-78-78

Հայաստանի Հանրապետություն, 375037, Երևան, Կ. Ուլնեցու 31
/Fax: (37410) 240 159 (37410) 247 123
K. Ulnetsu st. 31, Yerevan, 375037,Republic of Armenia
/Fax: (37410) 240 159 (37410) 247 123

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ»ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԿԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ № 1 ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության և Եվրասիական զարգացման (ԵԶԲ) միջև նախատեսվում է ստորագրել «Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի» ֆինանսավորման համար Եվրասիական տնտեսական ընկերության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից ներդրումային վարկի տրամադրման(այսուհետ՝ Ծրագիր) համաձայնագրի № 1 փոփոխությունը(այսուհետ՝ Փոփոխություն)՝ Ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմնի շրջանակներում նշանակալի ինստիտուցիոնալ փոփոխության և ծրագրի շրջանակներում կանխատեսվող խնայողությունների հաշվին հիմնանորոգման ենթակա այլ համակարգերի ներառման անհրաժեշտության պատճառով:

ՀՀ կառավարության և ԵԶԲ միջև 16.10.2015թ. կնքվել է Եվրասիական տնտեսական ընկերության հակաճգնաժամային հիմնադրամի միջոցներից Ծրագրի իրականացման համար 40 մլն ԱՄՆ դոլար գումար ներդրումային վարկի տրամադրման մասին համաձայնագիրը: Ծրագրի նպատակն մեխանիկական ոռոգման փոխարինում ինքնահոս համակարգերով, որոշ մայր ջրանցքների և երկրորդ կարգի ջրանցքների և ներտնտեսային ոռոգման ցանցերի վերականգնում, ՋՕԸ-ների ներտնտեսային ոռոգման ցանցերի արդիականացում և ինստիտուցիոնալ զարգացում: Ծրագրի շրջանակներում կֆինանսավորվի ոռոգման համակարգերի կառուցումը ութ համակարգերում, ինչի արդյունքում ակնկալվում է տարեկան տնտեսել 7.3 մլն. Կվտ/ժամ էլեկտրաէներգիա՝ 300 մլն. դրամ արժեքով, իսկ շահառուների քանակը կազմում է 21920 մարդ: Ակնկալվում է նաև ոռոգելի հողատարածքների աճ մոտ 1373 հա-ով: Կվերականգնվեն չորս մայր և քսաներկու երկրորդ կարգի ջրանցքների համապատասխանաբար 8.2 կմ և 54.1 կմ ծայրահեղ քայքայված, վթարային հատվածները և այլն: Միևնույն ժամանակ կանխատեսվող խնայողությունների հաշվին ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի առաջարկով ջրային ոլորտում կարևոր նշանակություն ունեցող և հիմնանորոգման ենթակա ոռոգման համակարգերը անհրաժեշտ քննարկումներից, մանրամասն ուսումնասիրություններից և նախագծահետազոտական աշխատանքներից հետո դոնորի համաձայնությամբ կընդգրկվեն ծրագրի շրջանակներում: Ծրագրի իրականացումը լուրջ խթան կհանդիսանա գյուղատնտեսության զարգացման, հետևաբար պարենային անվտանգության ապահովման և ոռոգման ջրի պաշարների արդյունավետ կառավարման ոլորտներում:

Ծրագրի իրականացումը 2016-2019թթ. կատարվել է ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի կողմից: Այդ ընթացքում կնքվել են նախատեսված շինարարական աշխատանքների իրականացման և այդ աշխատանքների վերահսկման տեխնիկական խորհրդատուների պայմանագրերի մեծ մասը: Առաջիկայում

նախատեսվում է լայնածավալ շինարարական աշխատանքների իրականացում։ ՀՀ կառավարության 28.02.2019թ. № 170-Ն որոշմամբ Ծրագրի հետագա իրականացումը վերապահվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին։

Հաշվի առնելով վերոգրյալը և Ծրագրի բացառիկ նշանակությունը ոռոգման համակարգերի արդիականացման շարունակականության ապահովման հարցերում՝ առաջարկվող Փոփոխության ստորագրումը համարվում է նպատակահարմար։